ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 127

«05» 11 2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Երևան քաղաքի դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Գորիսի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով ու Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ բաժնի 16-րդ գլխի 59-րդ կետի «Դատախազության դատախազ 9» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 8», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 23» բառերը՝ «Ընդամենը՝ 22» բառերով.

2) 3-րդ բաժնի 17-րդ գլխի 63-րդ կետի «Դատախազության դատախազ 6» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 5», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 10» բառերը՝ «Ընդամենը՝ 9» բառերով.

3) 3-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 105***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 103***» բառերով.

4) 5-րդ բաժնի 44-րդ գլխի 162-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 0» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 1», 163-րդ կետի՝ «Դատախազության դատախազ 3» բառերը՝ «Դատախազության դատախազ 4», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 5» բառերը՝ «Ընդամենը՝ 7» բառերով.

5) 4-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 87***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 89***» բառերով.

5) 6-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 105***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 103***», իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 87***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 89***» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ **Ա.ԱՖԱՆԴՅԱՆ**